ՀՀ Արմավիրիր մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-3 /:

Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը և գնահատմանը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, մասնակցում է զորակոչի, զորահավաքների կազմակերպման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- դիմում մրցույթային հանձնաժողովին /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման համար ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին
- արական սեռի անձիք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը իսկականի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2012 թվականի նոյեմբերի 20-ն է: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի դեկտեմբերի 3-ին ժամը 12:00-ին Գրիբոյեդովի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և

հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարան /գ. Գրիբոյեդով Չարենցի 9/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն ՝ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70 /: